

«Զարթոնք»ը կարելի է կարդալ նաև համացանցի վրայ հետեւեալ հասցեով՝ www.zartonkdaily.com հնչալես նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեան հետեւեալ հասցէներուն՝ e-mail: zartonkad@gmail.com P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon Tel./Fax: +961 1 444225

Ճանաթ՝ Խմբագրատան քարտուղարութեան ժամերն են.
Երկուշաբթին - Ուրբաթ՝ կեսօրուայ ժամը 12:00-էն երեկոյան ժամը 8:00

Էջ 02	▶ Յօդուած Մտասնետում	Էջ 03	▶ Մշակութային Արձագանգ Կը Վերահրատարակուի Թումանեանի Երկերու 10-հատորեակը. Դերիկեան	Էջ 04	▶ Մարզական Պայքըն Սիւնիխ Եւ Ռոմա Յաղթեցին
-------	--------------------------------	-------	---	-------	---

Լիբանանեան Լուրեր | Հայրենի Լուրեր

Կը Գտնուիւնք Մօտալուտ Յաղթանակի Դէմ Յանդիման. Նասրալլա

Երէկ երեկոյեան կատարած իր ելոյթին մէջ Զըզպալլայի առաջնորդ Ռասան Նասրալլահ անտեց, որ կը գտնուիւնք մօտալուտ յաղթանակի դէմ յանդիման:
Ան շեշտեց, որ մարտական գործողութիւններու աւարտին յաջորդ օրն իսկ Զըզպալլայ պատրաստ է գրաւած տարածքները յանձնելու լիբանանեան բանակին:
Նասրալլա իր խօսքին մէջ անդրադառնալով օգտագործուած զէնքերուն մասին ան յայտնեց, որ իրենք ամէն տեսակի զէնք չեն գործածեր ինչպէս որ մարդկային կորուստներ մօտալուտ զարթակայաններուն մէջ:
Ան խոստովանեցաւ, որ այս մարտերուն Զըզպալլայ սուրիոյ բանակի զինուորներուն հետ ուս կրուեցաւ ազատագրելու շրջանը ահաբեկչիները:



Նատուները միացեալ մամլոյ ասուլիս մը տուին՝նախորդորԼիբանանեանմամլոյ ուլ գիշերին, ուր անդրադարձ եղած էր կողմերը յուզող հիմնահարցերուն մասին:
Ինչպէս նշած էինք Զարիի Թրամփի հանդիպման ընթացքին քննարկութեան Նիւզ դարձած է Լիբանան գտնուող սուրիացի փախստականներու հարցը, ամերիկեան կողմէն լիբանանեան բանակին տրամադրուելիք նեցուկը, ինչպէս նաեւ միջին արեւելքը յուզող հիմնահարցերը: Ըստ ամերիկեան աղբիւրներու Միացեալ Նահանգներ մտադիր է Նոր պատժամիջոցներ սահմանել Զըզպալլայի դէմ: Իսկ Լիբանանի կառավարութեան գլխաւոր մտահոգութիւններն է

Ստեփանակերտը Կը Զերքէ Պաքուի Զաղորդումը, Թէ Հայկական Ուժերու Անօդաչու Ազրպէյճանցի Չիսուոր Մը Վիրաւորած Է

Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան տարածած տեղեկատւութիւնը, թէ հայկական ուժերու անօդաչու թռչող սարքի հարուած մը վիրաւորուած է զինուոր Մուրազ Պապաքիչեւ, հերթական ապատեղեկատւութիւն է: Այս մասին կը յայտարարէ Արցախի Զանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան մամլոյ ծառայութիւնը:
Արցախի Զանրապետութեան պաշտպանութեան նախարարութիւնը կը վճարուի, որ առաջնագիծին վրայ իրադրութիւնը կը շարունակէ մնալ յարաբերական հասցիստ, պարզապէս ազրպէյճանական քարոզչամեքենան կ'աշխատի իր ոճով՝ փորձելով ապատեղեկատւութիւններ տարածելու եղանակով մոլորութեան մէջ ձգել ինչպէս իր,



այսպէս ալ միջազգային հանրութիւնը:
«Պաշտպանութեան բանակի յառաջապահ զօրամասերը սահմանագիծի ամբողջ երկայնքին ո՛չ միայն չեն օգտագործած անօդաչու թռչող սարքեր, այլեւ կը շարունակեն խստիւ հետեւել զինադադարի պահպանման դրութեան», նշուած է հաղորդագրութեան մէջ:

«Արմենփրես»-ը Առցանց Հասանելի Դարձուցած Է Լուսանկարներու Մեկդարեայ Արխիւ



հրապարակելով, իսկ յետագային ատուց թիւը անւնցնելով՝ մենք ցոյց կու տանք, որ գործակալութիւնը եղած է եւ կը մնայ իրամասնակցի Յայաստանի կարեւոր ժողովրդապաշտպանութիւնը լուսաբանողը»,- ըսած է Անանեան:

«Արմենփրես» լրատուական գործակալութիւնը, Beeline-ը եւ Տէլնուրգիական զարգացման կեդրոն հիմնադրամը ազգարարած են «Արմենփրես. Պատմութիւն» նախագիծի ծիրէն ներս «history.armenpress.am» կայքի գործարկման մասին:
«Արմենփրես» լրատուական գործակալութեան տնօրէն Արամ Անանեան ըսած է, որ «Արմենփրես. Պատմութիւն» նախագիծը հնարաւորութիւն կու տայ թերթիւն պատմութեան էջերը, տեսնելու, թէ ինչ զարգացումներ տեղի ունեցած են:
«Ներկայիս 10 հազար լուսանկար

Շրջանային Լուրեր

Թուրքիոյ Մէջ Գործող Հակահայ Կազմակերպութեան Հերթական «Բացայայտում»ը Հայաստանի Եւ Քիւրտերու Մասին



Նախկին հետախույզ, արցախեան պատերազմի մասնակցի Կոլմ Վարդաճոյի այս առիթով իր ֆէյսպուքեան էջին մէջ գրած է, որ «Հագղըն»-ի հրապարակած տեսանիւթը իր վարած «Ողջ մնալու արուեստ» (ՈՄԱՅ) դասընթացքն է, եւ վերոնշեալ պնդումներուն հետ որքէ կ'աչ չունի:
Իսկապէս, Նոյն վերնագիրով յօդուած հրապարակած է նաեւ ազրպէյճանական «Turaninfo» լրատուակայքը՝ ՈՄԱՅ-ի փորձերն մէկու մը տեսագրութեամբ:
Նշենք, որ Ազրպէյճանի կողմէ ֆինանսավորուող հակահայկական «ASIMDER» կազմակերպութեան կողմէ կատարուող անհիմն յայտարարութիւնները, որոնք երբեք, որքէ ապացոյցներով չեն ուղեկցուի, խորհրդին չեն եւ Նոյնիսկ թրքական հեղինականուոր լրատուական կայքերու կողմէ արձագանգ չեն ստանար:
Կիւլպէի հերթական անհեթեթ յայտարարութիւնը արագ արտատպուած է ազրպէյճանական կայքերուն կողմէ, երբ թրքական մամուլը «լուրը չ'է ընդունած» այս պնդումը: Ուստի ուշագրաւ է, որ Կիւլպէի այս «բացայայտում»ը, որ Թուրքիոյ համար կարծես թէ պետք է մեծ կարեւորութիւն ունենար, տեղ գտած է միայն թրքական երկու ցած վարկանիշ ունեցող կայքերու մէջ:
Ի դեպ ազրպէյճանական «Հագղըն.ագ»-ի հրապարակած նիւթին մէջ ամէնը է նաեւ տեսանիւթ, որ սակայն Երեւանի ժամանակով 18:00 դրութեամբ հասանելի չ'է: Սակայն նիւթի սկզբնաղբիւրին մէջ որքէ տեսանիւթ չ'է հրապարակուած:

Խորայն Լոր Արգելներ Դրած Է Պաղեստինցիներուն Դէմ

«Sky News»-ը փոխանցեց, որ Իսրայէլ արգիւած է պաղեստինցիները մօտենալ Ալ Աքսայի մզկիթ՝ առաջնորդող «Պապ Ալաապաթ»ին:
Վերջին ղեպերէն ետք հին Երուսաղէմի մէջ կը տիրէ լարուած իրավիճակ:

Տասնեակ արաբ կիներ ցոյցի մասնակցած են, պահանջելով, որ իսրայէլեան զօրքը հեռացնէ մզկիթի շուրջ ամրացում փշալարերը:
Կը փոխանցուի նաեւ, որ այսօր չ'ըրբէշաբթի առաւօտ, իսրայէլեան զօրքը ձեռնարկուած է 21 պաղեստինցիներ:



Միջազգային Լուրեր

Ամերիկեան Գոնկրետը Նոր Պատիժներ Սահմանեց Իրանի, Հիւսիսային Զորեայի Եւ Ռուսաստանի Դէմ

Ամերիկայի գոնկրետը նոր պատիժներ սահմանեց Իրանի, Հիւսիսային Զորեայի եւ Ռուսաստանի դէմ:
Գոնկրետի 422 անդամներէն, միայն 3-ը չ'ընդունեցին այս որոշումը:
Հաւանականութիւն կ'աչ, որ այս քայլը զայրոյթ պատճառէ յատկապէս Ռուսաստանին եւ Նոյնիսկ կարգ մը երուպական երկիրներուն, որոնք ընկերութիւնները

կ'օգտուին ռուսական ջերմութի ուրտնէ: Նշենք որ այս ընկերութիւններն ալ պիտի ենթարկուին պատիժներու, եթէ Ամերիկեան գոնկրետի նոր տնօրինութիւնը պետք է աւելի ուշ ներկայացուին Սպիտակ Տուն, ուր կը սպասուի, որ վաւերացուին եւ գործադրութեան դրուին:
Իր կարգին Գոնկրետի նախագահ՝

Բոլ Բայն բացայայտեց, որ այս քայլը կը ճնշէ Ամերիկայի ամենավտանգաւոր թշնամիներուն եւ կ'երաշխարէր ամերիկացիներուն վտանգի չ'ենթարկուիլը:
Նշենք որ գոնկրետը մտադիր է պատիժներ սահմանել յատկապէս Ռուսաստանի վրայ, վերջինիս Ամերիկայի նախագահական ընտրութիւններուն ընթացքին միջամուխ ըլլալուն համար:

Առեւտրային Ոլորտը Հայաստանի Եւ Իրանի Միջեւ Պիտի Վերածի Ռազմավարական Մակարդակի

Իրանահայ պատգամաւոր Կարեն Խանլարեանի խօսքով՝ օրեր առաջ Իրանի խորհրդարանին մէջ ընդունուած Նորոյդ-Մերդի սահմանային դարպասի համատեղ օգտագործման մասին օրինագիծը ընդունուած չ'առաւել եր երկուստէ... Հայաստանի Զանրապետութիւնը հնարաւորութիւն կը տեսնայ տնտեսական գործունեութիւն ծաւալել 70-80 միլիոնը շուկայի մէջ, իսկ Իրան այդ համաձայնութեան միջոցով կրնայ համագործակցիլ ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ Եւրասիական տնտեսական միութեան անդամ երկիրներու հետ:
Իրանահայ պատգամաւորը «Tert.am»-ի հետ զոյցի ընթացքին պատմած է, որ օրինագիծը մեծ թիւով պատգամաւորներու քուէարկութեան շնորհիւ ընդունուեցաւ Իրանի խորհրդարանականի կողմէ, ընդամենը երկու պատգամաւոր դէմ քուէարկած է, որ կազմած է ընդամենը 1 տոկոսը, 70 տոկոսը կողմ քուէարկած է, մնացած մասն ալ չ'է մասնակցած քուէարկութեան, ինչ որ Կարեն Խանլարեանը օրինաչափ համարեց:
«Առեւտրային, տնտեսական համագործակցութեան համար բաւական արժեքաւոր համաձայնագիր է, որուն շուրջ համաձայնութիւնը ձեռք բերուած էր դեռ նախագահներ Սերժ Սարգսեանի եւ Հասան Ռոուհանիի հանդիպման ընթացքին: Իրանի խորհրդարանին մէջ արդէն օրինագիծը հաստատուեցաւ», - ըսած է ան:

Իրանահայ պատգամաւորը նշած է, որ օրինագիծը պիտի հեշտացնէ մաքսային գործընթացները երկու երկիրներու միջեւ: «Ենթադրելի է, որ բաւական պիտի իջեցնէ մաքսատուրքերու չափը: Կը կարծեմ՝ առեւտրային ոլորտը երկու երկիրներու միջեւ պիտի վերածի ռազմավարական մակարդակի»,- ըսած է ան:
«Հետաքրքրութիւն գոյութիւն ունի Իրանի մէջ հայաստանեան շուկայի տարբեր արտադրանքներուն նկատմամբ: Ինծի համար հետաքրքրական է այն փաստը, որ Իրան կը ցանկաւ համագործակցիլ հայկական նորագոյն արհեստագիտական ոլորտի ընկերութիւններու հետ»,- ըսած է ան:
Հայաստանի հետ Իրանի փոխարքերութիւններու ռազմավարական մակարդակը՝ անկախ տարածաշրջանին մէջ քարտեզական իրադրական վիճակէն, անփոփոխ է եւ չ'առաւելի խորքային:

Մշակութային Արձագանգ

Կը Վերահրատարակուի Թումանեանի Երկերու 10-հատորեակը. Դերիկեան

Յովհաննէս Թումանեանի 150-ամեակի ծիրէն ներս բազմաթիւ ձեռնարկներ պիտի իրականացուին, որոնց շարքին են նաեւ բուն գիտական ուսումնասիրութիւնները, լրագրողներու հետ այսօր կայացած հանդիպման ժամանակ ըսած է գրականագէտ Վարդան Դերիկեան:

Ան տեղեկացուցած է, որ ձեռնարկներու ծիրէն ներս պիտի վերահրատարակուի մեծ գրողի երկերուն 10 հատորեակը: Անոնք, սակայն, պարզունակ վերատպում պիտի չըլլայ, այլ պիտի ներառէ ուշ յայտնաբերուած ձեռագիրներ ու ծանօթագիրներ, որոնք նախապէս հարկադրաբար տպագրուած են հատորեակներէն դուրս: Նոր տպագրու-

թիւնը Եակն տարբերութիւններ պիտի ունենայ, ծանօթագրութիւններն աւելի մանրամասն եւ շատ պիտի ըլլան: Այժմ վերահրատարակուած է տասը հատորներէն երկուքը, երրորդը պիտի տպագրուի, երբ հովանաւորներ գտնուին:

«Երկրորդ հատորը կ'աւարտի 1914 թուականով, երրորդ հատորը պիտի աւարտի՝ 1917-ով: Ընդհանուր առմամբ, գրողի կեանքին տարեգրութեան կը վերաբերին տասը հատորներէն չորսը»,- նշած է գրականագէտը:

Վարդան Դերիկեան նշած է նաեւ, որ հայ մեծ գրողի ստեղծագործութիւններուն հանրահռչակման համար անհրաժեշտ է լուրջ միջոցներ եւ ժամանակ՝



անոնք պատշաճ որակով թարգմանելու եւ ներկայացնելու օտարերկրեայ ընթերցողին: Գրականագէտը միաժամանակ յոյս յայտնած է, որ Յովհաննէս Թումանեան եւ Կոմիտաս պիտի ընդգրկուին ԵՈՒՆԵՍԿՈՅԻ մէջ:

Իրանի Մէջ՝ Հայկական Ֆիլմերու Շաբաթ



Իրանի մէջ Հայաստանի դեսպանութեան եւ իրանեան «Art and experience»

մշակութային կազմակերպութեան նախաձեռնութեամբ կ'ընթացայ հայկական ֆիլմերու շաբաթ: «Ալիք» օրաթերթի թղթակից Կ. Դանթեան կը յայտնէ, թէ Յուլիս 19-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին՝ այս մասին տեղեկացուցած է Իրանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Արտաշէս Թումանեանը:

Դեսպան Թումանեան յայտնած է, որ Իրանի մէջ հայկական ֆիլմերու շաբ-

թուան մեկնարկը սկսած է Յուլիս 23-ին, որ պիտի տեսնեն մինչեւ Յուլիս 29: Շաբթուան ընթացքին պիտի ցուցադրուի 10 ֆիլմ, որոնց ընտրութիւնը կատարուած է կազմակերպիչ կողմէրուն միջոցաւ: Ֆիլմերը պիտի ցուցադրուին Թեհրանի, Մաշհատի եւ Շիրազի մէջ:

Ֆիլմերու ցուցադրութեանց զուգահեռ Իրան ժամանած հայաստանցի երկու ֆիլմարուեստի մասնագետներ վարպետութեան դասեր պիտի տան:

Յովհաննէս Այվազովսկիի Ծննդեան 200-ամեակին Առիթով Ուրբանիոյ Մէջ Յուշադրամ Թողարկուած Է

Ուրբանիոյ ազգային դրամատունը շրջանառութեան մէջ դրած է «Յովհաննէս Այվազովսկի» յուշադրամը:

Դրամահաւաքներու հաւաքածոն կը համալրուի յուշադրամով, որ թողարկուած է ակնաւոր ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկիի ծննդեան 200-ամեակին առիթով:

Ուրբանիոյ ազգային դրամատան կայք-էջին փոխանցմամբ՝ մետաղադրամը թողարկուած է «Ուրբանիոյ ակաւոր անհատներ» շարքին մէջ, որ շրջանառութեան մէջ դրուած է 35,000 օրինակ տպաքանակով:

«Ակնաւոր ծովանկարիչի ծննդեան 200-ամեակին նուիրուած յուշադրամի եւ նամականիչի թողարկումը համաշ-

խարհային գեղանկարչութեան գանձարանին մէջ Յովհաննէս Այվազովսկիի անուան պետական ճանաչման ակնայտ վկայութիւնն է, որ կ'ընդօգտէ հայկական ու ուրբանական մշակոյթներու փոխադարձ հարստացման ֆենոմենը», AnalitikaUA.net-ի հետ զրոյցին նշած է ուրբանացի տեսաբան, պատմաբան, Ուրբանիոյ գիւնակազատութեան միութեան անդամ Մաքսիմ Յարենկոն:

Ինչպէս նախապէս հաղորդուած էր՝ երկրի շրջաններուն մէջ Յովհաննէս Այվազովսկիի ծննդեան 200-ամեակին նուիրուած ձեռնարկները մեկնարկած են Նիքոլաեի մէջ՝ ցուցահանդէսներու շարքով, ուր ի պատիւ յայտնի ծովանկարիչին՝ կայացած են քանի մը ձեռ-



նարկներ: Յովհաննէս Այվազովսկիի աշխատանքներու ցուցահանդէս կազմակերպուած է նաեւ Զիւլեի մէջ:

Հայրենի Տնտեսութիւն

Խորովածի Միջազգային Փառատօն Հայաստանի Մէջ



«Խորովածի փառատօնը Հայաստանի մէջ ամենակայացած ձեռնարկներէն է, իրադարձութիւն է ոչ միայն մեր կեանքին մէջ, նաեւ համաշխարհային զբօսաշրջութեան մէջ»,- լրագրողներու հետ հանդիպման ըսաւ ՀՀ Չբօսաշրջութեան պետական կոմիտէի նախագահի առաջին տեղակալ Մեխակ Ապրետեան:

ըով, այս անգամ պիտի իրականացնէ ոչ թէ Ախթալա եկեղեցու տարածքին մէջ, ինչպէս եղած է մինչ այժմ, այլ Ախթալա քաղաքի՝ մարզադաշտի տարածքին մէջ:

«Տարածքը համեմատաբար աւելի մեծ է, քանի որ մեր մասնակիցները, այցելուներու թիւը երթալով կ'աւելնայ»,- նշեց ան:

Ս. Մամուլեան ըսաւ, որ կը նախատեսուի 30 եւ աւելի տաղաւար:

«Խորովածի միջազգային միութեան» համանախագահ Արտեմ Ենգոյեան ըսաւ, որ փառատօնի ծիրէն ներս կը նախատեսեն Հայաստանի մէջ առաջին անգամ իրականացնել միջազգային օրէններուն համապատասխան խորովածի մրցոյթ:

Ան կարեւոր համարեց այն փաստը, որ յատուկ փառատօնի մասնակցելու համար Հայաստան կու գան զբօսաշրջիկներ, նաեւ զբօսաշրջային ընկերութիւնները փառատօնը ներառած են իրենց զբօսաշրջային ծրագիրներուն մէջ:

Խորովածի միջազգային 9-րդ փառատօնը պիտի կայանայ Օգոստոս 20-ին:

«Հայխորհարարականաւնդոյթներու զարգացման եւ պահպանման» ՀՀ-ի նախագահ Սեդրակ Մամուլեանի խօս-

«Մասնակից խումբեր կը սպասենք Աստորիայէն, Լիթուայէն, Ռուսաստանէն: Բոլոր խումբերը լուրջ միջազգային փորձ ունին: Մեր հանրութեան համար հետաքրքիր կ'ըլլայ»,-panorama.am-ի փոխանցմամբ՝ ըսաւ ան:

Ա. Ենգոյեանի խօսքով, մրցոյթին համաձայն, պէտք է հինգ տեսակի խորոված պատրաստեն, մատուցեն դատարարներուն նշանակուած ժամուն:

Քաղուածքներ Օտար Մամուլէն

«Emporio Armani»-ն եւ «Հայկական Կայսրութեան» քարոզչութիւնը Թուրքիոյ Մէջ



Վերջին շրջանին Թուրքիոյ մէջ «HERO» (Հերոս) գրութեամբ վերնաշապիկ կրելու պատճառով ձեռքակալուած է 4, կալանաւորուած 1 քաղաքացի: Ըստ «Էրմէնի հապեր»-ի՝ թրքական «Listel» կայքի սիւնակագիր Սելիմ Կերչէբերը այս առթիւ կը յիշեցնէ, որ միայն վերնաշապիկին վրայ առկա գրութեան պատճառով մարդոց հետապնդումները նորոշուին չեն Թուրքիոյ մէջ:

2011-ին թեմային անդադարձած «Ալօս»-ի թղթակից Չաքարիա Միլոն-օղլուն ներկայացուցած է պատմութիւններ այն մասին, թէ ինչպէս Թուրքիոյ տարբեր քաղաքներու մէջ ձեռքակալուած են «Emporio Armani» գրութեամբ շապիկ կրող զբօսաշրջիկները՝ «հայկական քարոզչութիւն կատարելու» մեղադրանքով:

ճառակներէն մեկը կը նայի «Emporio Armani» գրութիւնը կրող անոր վերնաշապիկին եւ կը հարցնէ. «Դուն ինչ է, հայ արքայ՝ ես: Դուն հայկական կայսրութիւնը կը քարոզես»:

Այս խօսքերուն վրայ Կիրակոսը կը շրջապատէ շուրջ քսան հոգիներ ազգայնականներու խումբ մը, որ կը պատրաստուի անոր հետ Լիւնչի դատաստան տեսնել: Կիրակոսը փախուստի կը դիմէ եւ կ'ապաստանի ոստիկանական բաժանմունք, որոշ ժամանակ անց կ'ընայ վերադառնալ իր հիւրանոց: Սակայն ազգայնամուլներու բողոքէն ետք ոստիկանները կրկին կը ձեռքակալեն եւ կը հարցաքննեն զայն:

Նոյն մակնիշի վերնաշապիկ կրելու համար մեղադրուած է նաեւ ոմն Ուլգեն Չաղաշը, որ 16 տարեկանին ոստիկաններուն կողմէ մեղադրուած է հայկական քարոզչութեան մէջ: Ան ալ արդարացած է, թէ վերնաշապիկը իր մայրը գնած է:

Ուրիշ անգամ մը նոյն «յանցանք»ին մէջ մեղադրուած է նաեւ թռչանի անցած թուրք գնդապետի մը եղբորորդին: Վերջինս արդարացած է, թէ ինք «խուէլիսուական օջախներու (Սիւս Օսակարի) հետեւորդ է ու այդ պատճառով իրեն նման մեղադրուած առաջադրելու իրաւունք չունի»:

Պատճառը այն է, որ որոշ շաբաթային թուրք քաղաքացիներ եւ նոյնիսկ թարգմանիչներ «Emporio Armani»-ն «թարգմանած են» որպէս «հայկական կայսրութիւն»:

Այսպէս, 1988-ին Թուրքիոյ Ալշա կղզիին մէջ ոմն Կիրակոս (ըստ փաստաթուղթերու՝ Գիրեգեօզ Մերքեօղլու) իր կնոջ եւ երկու դուստրերուն հետ ափ կ'երթայ՝ ձուկ գնելու: Այդ պահուն վա-

Այցելեցէ՛ք
Կարդացէ՛ք
Տարածեցէ՛ք
www.RagMamoul.net-ը

Հայրենի Տուեալներ

2016-ին Հայաստանի Մէջ Տեղեկատուական Արհեստագիտութեանց (IT) Ոլորտը Աճած Է 38.2 Տոկոսով



Տեղեկատուական արհեստագիտութեանց (IT) հայաստանեան ոլորտը անցեալ տարի մրցանշային աճ արձանագրած է՝ 38.2 տոկոս:

Ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներով, եթէ նախորդ ինը տարիներուն հայաստանեան ամբողջ տնտեսութեան միջին տարեկան աճը կազմած է 1.9 տոկոս, տեղեկատուական արհեստագիտութեանց միջին տարեկան աճը կազմած է 12.7 տոկոս:

ՏԱ ձեռնարկութիւններու միութեան ղեկավար Կարեն Վարդանեանի խօսքով՝ նորութիւնը ոլորտէն ներս որակական

աճն է: Աստիճանաբար աւելի շատ հայաստանեան խումբեր, ընկերութիւններ յայտնի կը դառնան ՏԱ-ի միջազգային հարթակին վրայ:

«Մեծական արտադրանքներ պիտի ըլլան, որոնք միջազգային շուկայի մէջ կը սկսին յաջողութիւն ունենալ: SoloLearn-ի, պորտմանի ծրագրի, PICSArt-ի շարունակական յաջողութիւնները կը տեսնենք: Մեր ընկերութիւնները, նոյնիսկ անոնք, որոնք միջազգային են, Երեւանը կը դարձնեն կեդրոն: Նոյնը, օրինակ, National Instrument-ը այսօր ճարտարագիտական կեդրոն է National Instrument ընկերութեան համար, ամբողջ Եւրոպայէն մինչեւ Սինկափուր լոնտոններու համար»,- յայտնեց Վարդանեան:

Armphone եւ Armtab արտադրող Technology and Science Dynamics ընկերութեան տնօրէն Վահան Շաքարեանի խօսքով՝ ՏԱ ոլորտի հայաստանեան ընկերութիւններու նման յաջողութիւնը

ամեն բանէ առաջ կը բացատրուի արտահանման աճով:

«Ասիկա կը բացատրէ ՏԱ ոլորտի ընկերութիւններու համաշխարհային շուկայ մտնելու հնարաւորութիւնները՝ արտահանման, համատեղ աշխատանքներու շնորհիւ: Իմ երեք տարուան Հայաստանեան գործունեութեան ընթացքին ատիկա շօշափելի կը նկատեմ»,- ըսաւ Շաքարեան:

Որպէսզի աճը կայուն դառնայ, ոլորտի ներկայացուցիչները անհրաժեշտ կը նկատեն կառավարութեան աջակցութիւն ու կրթական համակարգի բարեփոխումները:

«Մեր աճը այսօր կը սահմանափակուի մասնագիտական խիստ պակասով: Այսինքն, կրթական համակարգը ամբողջութեամբ ոչնչացուած է, գրեթէ գոյութիւն չունի, օրինակ, համալսարանական կրթութիւնը: Միջին մասնագիտական գոյութիւն չունի»,- ըսաւ Կարեն Վարդանեան:

Շնորհակալ Նախաձեռնութիւն

Ախալքալաքի Առաջին Դասարանցիները «Նորպուր» Ստացած են



Վրաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը սկսած է համակարգիչներու բաշխումը Ջաւախքի առաջին դասարանցիներուն: Այս մասին

կը հաղորդէ «News.am»-ը՝ վկայակոչելով «Jnews.ge»-ը:

Յուլիս 22-ին, Վրաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան ներկայացուցիչները Ջաւախք հասցուցած են առաջին դասարանցիներու համար նախատեսուած նորպուր-երը:

Ախալքալաքի շրջանին մէջ, 2017-2018-ի ուսումնական տարեշրջանի 614 առաջին դասարանցիներ պիտի ստանան նոր Acer նորպուր-եր, իսկ Նինոծ-միւղայի շրջանի մէջ՝ 351 առաջին դասարանցիներ:

«Իմ առաջին համակարգիչը» ծրա-

գիրը, ըստ որուն բոլոր առաջին դասարանցիներուն պիտի բաժնուի համակարգիչներ, սկսած է 2011-ին:

Այս տարի աննշան, սակայն նուազած է Ախալքալաքի շրջանի առաջին դասարանցիներու թիւը՝ նախորդ տարուան հետ համեմատած: Անցեալ տարի առաջին դասարանցիներու թիւը 674 էր:

Բորժմի շրջանին մէջ այս տարի համակարգիչներ կը ստանան 337 առաջին դասարանցիներ, Ախալքալաքի մէջ՝ 596, Աղիգեանի մէջ՝ 194, իսկ Ասպինձայի մէջ՝ 166:

Մարզական

Չեմպիոնզ Լիգ

ԲԿՄԱ եւ Վարտար Յաղթեցին

Երեքշաբթի օր սկսան Եւրոպայի Չեմպիոնզ Լիգի երրորդ փուլի խմբային մրցումները: Մակեդոնիոյ ախոյեան Արդիտի «Վարտար»ը իր դաշտին վրայ կարելու յաղթանակ մը տարաւ Դանիոյ ախոյեան «Բեօպէնհավըն»ի նկատմամբ 1-0 հաշիւով: Պաշտպան Յովհաննէս Զամբարձումեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին «Վարտար»ի կազմէն եւ դեղին քարտ ստացաւ: Իսկ հաւաքականի պաշտպան Տիգրան Բարսեղեան փոխարինուեցաւ 76-րդ վայրկեանին: Մոսկուայի «ԲԿՄԱ»ն իր դաշտէն դուրս կարելու յաղթանակ տարաւ Յունաստանի «ԱԷՔ»ին նկատմամբ 2-0 հաշիւով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սլավիա Փրակ (Չեխ.) - ՊԱԹԷ Պորիսով (Պելաւա.) 1-0
- Բարապալ (Ատր.) - Շերիֆ (Մոլտովա) 0-0
- Էֆ Սի Ես Պի (Ռում.) - Վիքթորիա Փլզըն (Չեխ.) 2-2
- ԱԷՔ Աթէնք (Յուն.) - ԲԿՄԱ Մոսկուա (Ռուսիա) 0-2

կողեր. Ա.Յակոյե 45+1, Փ.Վերնակում 55, փոխ.Վազիս, Վիթիսիո
 - Վարտար Արդիտի (Մակ.) - Բեօպէնհավըն (Դանիա) 1-0
 - Փարթիզան Պելլ (Սերպ.) - Օլիմպիաքոս Փորթ (Յուն.) 1-3
 կողեր.Թաուամպա Բանա 10 - Է.Սոհամմետ Պեն 6, 56, Էմենիքէ 90+1

Եւրոպայի Կիներու Ախոյեանութիւն

Գերմանիա եւ Շուեդ Անցան Յաջորդ Հանգրուան

Հոլանտայի մէջ տեղի ունեցող Եւրոպայի կիներու ֆութպոլի ախոյեանութեան երրորդ հանգրուանի մրցումներուն, երկրորդ խմբակին մէջ առաջատար Շուեդը անակնկալ պարտութիւն մը կրեց Իտալիայէն 2-3 հաշիւով: Իսկ Գերմանիան 2-0 հաշիւով յաղթեց Ռուսիային եւ գրաւեց խմբակին առաջին դիրքը: Գերմանիա եւ Շուեդ անցան քառորդ աւարտական հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները եւ վերջնական դասաւորումը.

- Ռուսիա - Գերմանիա 0-2
- կողեր.Պ.Փիթըր տուգ.10, Տ.Մարգրաս տուգ.56
- Շուեդ - Իտալիա 2-3, կողեր.Լ.Շելին տուգ.14, Ս.Պլաքսթենիուս 47 - Տ.Սապաթիս 4, 37, Զ.Փրիբլի 85

Դասաւորում.1-Գերմանիա 7 կէտ 4-1, 2-Շուեդ 4 կէտ 4-3, 3-Իտալիա 3 կէտ 5-6, 4-Ռուսիա 3 կէտ 2-5:

Միջազգային Ախոյեաններու Բաժակ

Պայլըն Միւնիխ եւ Ռոմա Յաղթեցին



Սինկափուրի մէջ սկսած Միջազգային ախոյեաններու բաժակի մրցաշարքի առաջին մրցումին, «Պայլըն Միւնիխ»ը յաղթեց «Չելսի»ին 3-2 հաշիւով: Մրցումին հաշիւը բացաւ «Պայլըն Միւնիխ»ի Ռաֆինիան 6-րդ վայրկեանին, Ռիպերէնէ փոխանցում ստանալով: Թոմաս Մուլլըր 12-րդ եւ 27-րդ վայրկեաններուն նշանակեց, Ռիպերիի եւ Թոլիստոյի փոխանցումներով, հաշիւը դարձնելով 3-0: «Չելսի»ն սթափեցաւ առաջին կիսախաղի 45+3-րդ վայրկեանին, երբ Մարքոս Ալոնսո նշանակեց Սոզըզի փոխանցումէն օգտուելով: 85-րդ վայրկեանին Պաթշուայի նշանակեց անգլիական խումբին երկրորդ կողը: Մրցումը ավարտեցաւ «Պայլըն Միւնիխ»ի 3-2 հաշիւով յաղթանակով: Մրցաշարքին կը մասնակցի նաեւ «Իւթեր Միլան»ը: ԱՄՆ-ի մէջ տեղի ունեցող Միջազգային ախոյեաններու բաժակի մրցաշարքի երկրորդ հանգրուանին, «Ռոմա»ն յաղթեց «Թոթըմհեմ Դոքսթըր»ին 3-2 հաշիւով ու վերջին վայրկեանին նշանակուած կողով եւ առժամաբար գրաւեց 2-րդ դիրքը դասաւորման մէջ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Թոթըմհեմ Դոքսթըր - Ռոմա 2-3, կողեր.Յ.Ռիսթը 87, Վ.Եանսըն 90+1 - Տ.Փերթթի տուգ.13, Զ.Ունտըր 70, Ս.Թուսթիլեյ 90+2

Քոփա Սուտամերիքեան

Շափեթոյնէս եւ Սանթա Ֆէ Անցան Յաջորդ Հանգրուան

Հարաւային Ամերիկայի ակումբներու երկրորդ մրցաշարքին՝ Քոփա Սուտամերիքեանայի վերջին 32-ի հանգրուանի դարձի մրցումներուն, Պրագիի «Շափեթոյնէս»ն տուգանային հարուածներով յաղթեց Արժանթինի «Տեֆէնսա Ի ժուսթիսիա»ին եւ անցաւ յաջորդ հանգրուան: Զոլոմպիոյ «Սանթա Ֆէ»ն ալ յաղթեց եւ անցաւ յաջորդ հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Շափեթոյնէս (Պր.) - Տեֆէնսա Ի ժուսթիսիա (Արժ.) 1-0
- երթ.0-1, տուգ.4-2
- Սանթա Ֆէ (Զոլ.) - Ֆուերթա Ամարիյա (Էքուատոր) 1-0, երթ.1-1

Այսօրուան Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել այսօրուան մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).
ԶԵՄՓԻՆՉ ԼԻԿԻ 3-ՐԴ ՆԱԽԱՊԱՏՐ.ՀԱՆԳՐՈՒՄՆԵՐ
 Ժամը 19:00 Մլտա Պոլսուա (Չեխ.) - Աքնտեպէու Զուս (Ալպ.)
 Ժամը 19:30 Օլիմպիք Տոնտք (Ղըբ.) - ՓՈԶ Սալոնիք (Յուն.)
 Ժամը 19:45 Մաքապի ԹՎ (Իսր.) - Փակիոնիոս (Յուն.)
 Ժամը 20:00 Փի Ես Վի Ալստ. (Հոլ.) - Օսիլէք (Իսրուաթ.)

Ժամը 20:00 Զրաստար (Ռուս.) - Լիւկաի (Դան.)
 Ժամը 20:00 Շթուրմ Կրաց (Աստ.) - Ֆեներապահչէ (Թուր.)
 Ժամը 20:00 Ութթէխթ (Հոլ.) - Լեխ Փոզնան (Լեհ.)
 Ժամը 20:00 Եյ Ի Բէյ Լարնաքա (Կիպր.) - Տին Միլսը (Պելաւա.)
 Ժամը 20:00 Եյ Այ Բէյ (Շուեդ) - Սփորթինկ Պրակա (Փոր.)
 Ժամը 20:30 Տիւնսո Պուխար (Ռում.) - Աթլետիք Պիլպաս (Սպ.)
 Ժամը 20:30 Պրթե Փլովտին (Պուլ.) - Մարիթիմո (Փոր.)
 Ժամը 20:30 Պելե Եահուտա (Իսր.) - Չելսի Ս.Փերթս. (Ռուս.)
 Ժամը 21:00 Զրայովա (Ռում.) - Միլան (Իտ.)
 Ժամը 21:30 Փանաթինալթոս (Յուն.) - Զապալա (Ատր.)
 Ժամը 21:30 Վուրտո (Ֆր.) - Վիտտորն (Հունգ.)
 Ժամը 21:30 Կարմիր Աստղ (Սերպ.) - Սփարթա Փրակ (Չեխ.)
 Ժամը 21:45 Եպըրտին (Սլով.) - Ափոլլոն Լիմասոլ (Կիպր.)
 Ժամը 21:45 Օլիմպիք Մարսեյ (Ֆր.) - Բէյ Վի Օսթենտ (Պել.)
 Ժամը 22:00 Աստորիա Վիեննա (Աստ.) - ԱԷԼ Լիմասոլ (Կիպր.)
 Ժամը 22:00 Եվըրթըն (Անգ.) - Ռուտմուրդեր (Սլովակ.)
 Ժամը 22:00 Ֆրայպուրկ (Գեր.) - Տոմճալ (Սլովեն.)

ԵՐՈՊԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 21:45 Փորթուկալ (3) - Անգլիա (1)
 Ժամը 21:45 Սկոտլան (4) - Սպանիա (2)
ՄԻՋԱԶԳԱՅԻ ԱՆՈՅԵԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱԿԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 14:35 Պայլըն Միւնիխ - Իւթեր Միլան
ԶՈՓԱ ՍՈՒՍՏԵՐԻՔԱՆՍՅԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՁ
 Ժամը 01:15 Արսենալ (Արժ.) - Սփորթ Ռեսինգ (Պր.)
 Ժամը 03:45 Մետեյին (Զոլ.) - Ռասինկ Արժ.)
ՊՐԱՉԻԼԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՁ
 Ժամը 03:45 Աթլետիքո Փարանսէս (16) - Կրեմիո (2)
ԱՐԴԲԱԿԱՆ ԱՎՈՒՄԵՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 19:00 Ալ Ռիլալ (2) - Նաֆթ Ալ Ուսաթ (4)
 Ժամը 22:00 Ալ Թարաժժի (1) - Ալ Մարրիխ (3)
ԹԵԼԵՍԻ ԱԹԼԵՆՏԱՅԻ ՄՐՁԱՇՄՐԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
 Ժամը 00:00-էն սկսեալ europa1 կայանէն
ԼՈՂԻ ԱԵՄԱՐԴԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՕՐ
 Ժամը 10:30, 18:30 Լոդարշալ beinsports կայանէն
 Ժամը 11:30-էն սկսեալ Ջրագնդակ տղոց դասաւորում beinsports կայանէն

Պասքէթպոլ Ասիոյ Կիներու Ախոյեանութիւն

Լիբանան Հասաւ Քառորդ Աւարտական

Հնդկաստանի մէջ սկսան պասքէթպոլի Ասիոյ կիներու ախոյեանութեան մրցումները: Առաջին հանգրուանին Լիբանան մրցեցաւ Դազախստանի դէմ եւ պարտուեցաւ 54-62 հաշիւով: Երկրորդ հանգրուանին հաւաքականը մրցեցաւ Ֆիճիի դէմ եւ յաղթեց 90-48 հաշիւով: Իսկ երրորդ հանգրուանին լիբանանցիները յաղթեցին Սինկափուրի 74-64 հաշիւով եւ ապահովեցին քառորդ աւարտական հանգրուանի տոմսը: Լիբանանի ամենալաւ նշանակողն էր Նենսի Ալ Մաալուֆ 16 կէտով:

Պասքէթպոլ Եւրոպայի Մինչեւ 16 Տարեկան Տղոց Ախոյեանութիւն

Հայաստան Տօնեց Երկրորդ Յաղթանակը

Անտորպայի մէջ սկսան Եւրոպայի մինչեւ 16 տարեկան պասքէթպոլի 3-րդ դասակարգի ախոյեանութեան մրցումները: Առաջին հանգրուանին Հայաստանի հաւաքականը մրցեցաւ Ճիպրալի դէմ եւ յաղթեց 66-59 հաշիւով: Երկրորդ մրցումին, Հայաստանի տղաքը մրցեցան Սոլովայի հաւաքականին դէմ եւ յաղթեցին 78-37 հաշիւով:

Լոդ Աշխարհի Ախոյեանութիւն Լետըքի, Քինկ, Մաս եւ Շու Յաղթեցին

Հունգարիոյ մայրաքաղաք Պուտափէշթի մէջ կը շարունակուին աշխարհի լոդի ախոյեանութեան մրցումները: Երկրորդ շաբթուան մրցումներուն, ամերիկացի Քեյթի Լետըքի արձանագրեց փայլուն արդիւնք: Ամերիկացի Լիլի Քինկ եւ քանադացի Քայլի Մաս կտրեցին աշխարհի մրցանիշներ: Իսկ տղոց ջրագնդակի քառորդ աւարտական հանգրուանի մրցումները ավարտեցան: Յունաստան, Սերպիա, Հունգարիա եւ Իսրուաթիա հասան կիսաւարտական հանգրուան: Ստորեւ տեսնել Երեքշաբթի օրուան արձանագրուած արդիւնքները. Լոդարշալ

- Կիներու 1500 մ ազատ լոդ.1-Քեյթի Լետըքի-ԱՄՆ 15:31.82 վրկ.
- Կիներու 100 մ կոլոժք լոդ.1-Լիլի Քինկ-ԱՄՆ 1:04.13 վրկ.
- Աշխարհի սոր մրցանիշ
- Կիներու 100 մ կռնակ լոդ.1-Քայլի Մաս-Քան. 58.10 երկվ.
- Աշխարհի սոր մրցանիշ
- Տղոց 100 մ կռնակ լոդ.1-Փայլու Շու-Չին. 52.44 երկվ.

Ջրագնդակ

- Տղոց քառորդ աւարտական հանգրուանի արդիւնքներ.
- Մոնթենէքրո - Յունաստան 7-12, - Սերպիա - Աւստրալիա 15-5
- Հունգարիա - Ռուսիա 14-5, - Իսրուաթիա - Իտալիա 12-9
- Մետալներու դասաւորումը 12 օր ետք.
- 1-Չինաստան 12 ոսկի, 9 արծաթ, 3 պրոնզ, 24 մետալ
- 2-Ռուսիա 8, 3, 6, 17
- 3-ԱՄՆ 6, 8, 5, 19
- 4-Ֆրանսա 5, 1, 1, 7
- 5-Բրիտանիա 3, 2, 1, 6

★ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ★

Իրենց ակումբին անդամ ընկերներն՝ ճորճ եւ Վազգէն Շաալի սիրեցեալ մօր Ժանէթ Շաալի մահուան տխուր առիթով ՌԱԿ Միիրան Տամատեան ակումբի վարչութիւնը «Չարթօնք»ին կը նուիրէ՝ 50,000 Լ.՜

Երգիծանք

Քաղեց՝ ՏԻՐԱՆ Գ. ՍԱՐԳԻՍԵԱՆ «Չարթօնք»ի աշխատակից

Ամուսինը յօղուած մը կը կարդայ բարձրաձայն, որուն մէջ գրուած է թէ կին արարածը օրական 30,000 բառ կը գործածէ, իսկ երկը մարդիկ 15,000:
 Կինը կը մէջբերէ:
 Որովհետեւ մէկ բանը երկու անգամ պետք է ըսեմ քեզի:
 Ամուսինը կնկան կողմ կը դառնայ ու կը հարցնէ:
 -Ի՞նչ.....
 * * *
 Երկուորեակներէն մէկը տունէն կ'իջնէ փողոց, հազիւ մի քանի քայլ առաձ՝ կը հանդիպի
 Իր եղբոր ու կ'ըսէ:
 -Ռ՞ր էս ծօ՞, մաման երկու անգամ լոգցուց գիս...

ՄԱՅԱԶԴ

Տեր եւ տիկին Ճորճ Շաալի եւ զաւակունք
 Տեր եւ տիկին Վազգէն Շաալի եւ զաւակունք
 Տիկին Մարի Էքմէքեան եւ զաւակունք
 Տիկին Ժագլին Տումբը եւ զաւակունք
 Տեր եւ տիկին Գօգօ Սրապետեան եւ զաւակունք
 եւ համայն Շաալի, Էքմէքեան, Տումբը, Սրապետեան, Նալպանտեան, Աթժեան, Էլմաճեան, Ալեմզեան եւ Թօթօ ընտանիքներ եւ ազգականներ կը գումեմ իրենց մօր, մեծ մօր, քրոջ, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ԺԱՆԵԹ ՇԱԱԼԻ
 (Շուալ՝ Սրապետեան)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 25 Յուլիս 2017-ին: Յուրաբակտորութեան արարողութիւնը կատարուեցաւ Գորեքշաբթի, 26 Յուլիս 2017-ին, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ Պուրճ Զամմուտ, ուրիշ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Զամմուտի Ազգային գերեզմանատունը:
 Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
 Յաւակցութիւնները կ'ընդունուին «Երջօ Սամուելեան -Շոագոյն» սրահին մէջ, Հինգշաբթի, 27 Յուլիս 2017-ին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, Նոյն վայրին մէջ:
 * * *

Այս տխուր առիթով «Չարթօնք» իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին հարազատներուն, ի մասնաւորի հանգուցեալին զաւակներուն՝ ընկերներ ճորճ եւ Վազգէն Շաալիին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Փօլ Այանեանի հնդանք - հնդացները Գիրըը

ԸԱՂԵՑ ԵՒ ՄԵՆԿԵՑ՝ ՓՕԼ ԱՅԱՆԵԱՆ

ԽՆՂԻՆԷ - ԽՆՂԱՅՆԵՆԷ

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ

Ալպեր Սարգիսեանի մահուան առաջին տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի 30 Յուլիս 2017-ին, Սուրբ Նշան Մայր եկեղեցոյ մէջ, Չորքաք Պլաթ, յաւարտ Ս. Պատարագի:

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեալ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամբէ անկախ սպորտս վրիպակներու պարագային, կ'ապակիսինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: